



# ԱՆՎՏԱՆԳ ԴԵՂ,
# ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔ

Ցանկացած դեղ կարող է առաջացնել կողմնակի երևույթներ: Տեղեկացեք բժշկից կամ դեղագետից Ձեր դեղի ընդունման ընթացքում հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին: Դիմեք բժշկին, եթե Ձեզ մոտ դիտվել է լուրջ կողմնակի ազդեցություն:

Ուզում եք իմանալ ավելին, այցելեք

www.pharm.am

ՀՀ ԱՆ Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն
0051, ք.Երևան Կոմիտասի 49/4,
հեռ.՝ (+374 10) 232133,
ֆաքս՝ (+374 10) 232 942,
թեժ գիծ՝ (+374 10) 237 265,
(+374 98) 773 368:

## Բժշկին այցելելիս

- Վերցրեք այն դեղերի ցանկը, որոնք ընդունում եք տվյալ պահին:
- Հարցրեք բժշկին նոր նշանակվող դեղի հետ կիրառվող դեղերի համատեղելիության մասին:
- Հայտնեք բժշկին, եթե երբևէ ունեցել եք ալերգիկ ռեակցիաներ, ասեք այն ամենի մասին, ինչը կարող է ազդել դեղի ընդունման վրա:
- Տեղեկացրեք, եթե հղի եք կամ կերակրում եք կրծքով:
- Հարցրեք այն հանգամանքների մասին (մեքենա վարելը, ալկոհոլ օգտագործելը, ծխելը), որոնցից պետք է հնարավորինս խուսափել տվյալ դեղն օգտագործելիս:
- Տվեք բոլոր Ձեզ հետաքրքրող հարցերը դեղի վերաբերյալ և համոզվեք, որ ճիշտ եք հասկացել բժշկի խորհուրդները:
- Գրի առեք բժշկի խորհուրդները, եթե դժվարանում եք հիշել:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՆ ԴԵՂԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ





- Դեղը ձեռք բերեք միայն վստահելի աղբյուրներից:
- Պահպանեք դեղը երեխաների համար անհասանելի տեղում:
- Հոգ տարեք Ձեր առողջության մասին:
- Հայտնեք դեղի կողմնակի ազդեցությունների մասին:

Investing in our future
The Global Fund
To Fight AIDS, Tuberculosis and Malaria

## Դեղը գնելիս

- Հավաստիացեք, որ Ձեր գնած դեղն այն է, ինչ նշանակել է բժիշկը:
- Խնդրեք դեղագետին ևս մեկ անգամ ստուգել դեղը, եթե դրա վերաբերյալ կան կասկածներ:
- Տեղեկացեք հնարավոր կողմնակի ազդեցությունների մասին:
- Ստուգեք դեղի պիտանիության ժամկետը:
- Ճշտեք, թե ինչպես պատշաճ կերպով պահպանել դեղը տնային պայմաններում:
- Տեղեկացեք, թե ինչպես և ինչ կարգով է անհրաժեշտ դադարեցնել դեղի օգտագործումը:
- Կարդացեք և պահպանեք դեղի կիրառման հրահանգը:

ԱՆՎՏԱՆԳ ԴԵՂ,

ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔ

